

PROCEEDINGS OF THE YEREVAN STATE UNIVERSITY

Physical and Mathematical Sciences

№ 2 (237), 2015

ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱԹԵՍՍԻԿԱ

Գասայքյան Ա. Գ. ՈՒղիղների գույզ և մաքսիմալ հավանականություն էջ. 3–6

Հոդվածում հետազոտված է հարթության մեջ անկախ և միատեսակ բաշխված ուղիղների գույզ, որոնք հատում են **D** ուղղուցիկ տիրույթը: Դիտարկված է **D**-ի ներսում ուղիղների հատվելու $P_D(A)$ հավանականությունը:

Ծրջանի և ուղղանկյան համար կառուցված են պատահական ուղիղները գեներացնող զուգահեռ տեղափոխությունների խմբի նկատմամբ հաստատած չափեր, որոնց դեպքում $P_D(A)$ -ն ընդունում է իր մեծագույն արժեքը: Ցույց է տրված նաև, որ ցանկացած ρ -ի համար $[0, 1/2]$ հատվածից և ցանկացած քառակուսու համար զոյլություն ունի պատահական ուղիղները գեներացնող չափ այնպիսին, որ $P_D(A)=\rho$:

Գևորգյան Ա. Լ., Մանվանյան Շ. Ա. Որոշ պարբերական արտադրյալների խմբերի ավտոմորֆիզմի մասին էջ. 7–10

Ապացուցված է, որ եթե r կարգի ցիկլիկ խմբերի n -պարբերական արտադրյալի ճեղքող ավտոմորֆիզմի կարգը պարզ թվի աստիճան է, որտեղ r -ը n -ի բաժանարար է, իսկ $n \geq 1003$, ապա այն ներքին ավտոմորֆիզմ է: Դրանով ընդհանրացվում է ազատ պարբերական արտադրյալների համար նախկինում ստացված համանման արդյունքը:

Հակոբյան Յու. Ռ., Աղքասանյան Ա. Ա. Երկանկյունագծային մատրիցների Սուր-Պենրուզի հակադարձումը. I էջ. 11–20

Հոդվածը նվիրված է հատուկ տեսքի երկանկյունագծային մատրիցների Սուր-Պենրուզի հակադարձման բանաձևերի արտածմանը: Արդյունքում ստացված են փուլոհակաղաքարձ մատրիցի տարրերի բացահայտ արտահայտություններ: Ստացված բանաձևերի հիման վրա՝ ըստ թվաբանական գործողությունների կարգի մշակված է օպտիմալ հաշվողական ալգորիթմ:

Կարախսանյան Ա. Ի. Սի դիտողություն սիմետրիկ β -հավասարաչափ փակ հանրահաշիվների մասին էջ. 21–25

Աշխատանքում ուսումնասիրվում է տոպոլոգիական տարածության վրա որոշված սիմետրիկ, β -հավասարաչափ փակ ֆունկցիաների հանրահաշվի համալուծ տարածությունը և բերվում են կիրառություններ համարյա պարբերական ֆունկցիաների հանրահաշվում:

**Սարգսյան Ս. Ա. Անընդհատ ֆունկցիայի Ֆուրիե–Ուոլշի շարքի տարամիտության
մասին**

էջ. 26–29

Ապացուցվում է, որ 0 խտացման կետով, դրական չափի ցանկացած P կատարյալ բազմության համար կարելի է գտնել $[0; 1]$ -ի վրա անընդհատ $f(x)$ ֆունկցիա, այնպիսին, որ P բազմության վրա $f(x)$ -ի հետ համընկնող և $[0; 1]$ -ի վրա սահմանափակ և չափելի կամայական ֆունկցիայի Ֆուրիե–Ուոլշի շարքը տարամիտի 0 կետում:

ՄԵԽԱՆԻԿԱ

**Քերոբյան Ա. Վ. Երկու վերջավոր առաձգական վերադիրներով առաձգական
կիսահարթության և անվերջ սալի վերաբերյալ կոնտակտային խնդիրների
մասին, սահիք միջնաշերտերի առկայությամբ**

էջ. 30–38

Աշխատանքում դիտարկվում են խնդիրներ առաձգական կիսահարթության և անվերջ սալի համար, որոնք զծի երկարությամբ, հարթության մեջ, վերջավոր տեղամասերում ուժեղացված են տարբեր առաձգական բնութագրերով և հաստությամբ՝ երկու վերջավոր վերադիրներով։ Կոնտակտային փոխազդեցությունը վերադիրների և դեֆորմացվող հիմքերի միջև իրագործվում է այլ ֆիզիկամեխանիկական և երկրաչափական բնութագրեր ունեցող սահիք միջնաշերտերի միջոցով։ Կոնտակտային լարումների որոշման խնդիրը բերված է տարբեր միջակայքերում երկու անհայտ ֆունկցիաների նկատմամբ Ֆրեդհոլմի երկրորդ սեու ինտեգրալ հավասարումների համակարգի լուծմանը, որը խնդրին բնորոշ պարամետրի փոփոխման որոշ տիրույթում կարելի է լուծել հաջորդական մոտավորությունների եղանակով։ Դիտարկված են հնարավոր մասնավոր դեպքեր և պարզաբանված է կոնտակտային լարումների վարքը և բնույթը կոնտակտի տարբեր տեղամասերում։

ԲՆՖՈՐՄԱՏԻԿԱ

Խոչատրյան Ն. Ա. Բլոկների գրաֆների միջակայքային տոտալ ներկումներ

էջ. 39–44

G գրաֆի տոտալ ներկումն այդ գրաֆի այն ներկումն է, որի դեպքում հարևան զագարները և կողերը ներկված են տարբեր գույներով և ցանկացած զագար և նրան կից կողերը ևս ներկված են տարբեր գույներով։ G գրաֆի տոտալ ներկումը $1, 2, \dots, t$, գույներով կանվանենք միջակայքային տոտալ t ներկում, եթե բոլոր գույներն օգտագործվել են և յուրաքանչյուր v զագար և v -ին կից կողերը ներկված են $d_G(v)+1$ հաջորդական գույներով, որտեղ $d_G(v)+1$ -ով նշանակված է v զագարի աստիճանը G գրաֆում։ Այն գրաֆը, որի յուրաքանչյուր 2-կապակցված բաղադրիչ հանդիսանում է կլիկա, բլոկների գրաֆ է։ Աշխատանքում ապացուցված է, որ բոլոր բլոկների գրաֆներն ունեն միջակայքային տոտալ ներկում։ Ստացված է նաև որոշ զնահատականներ այդ գրաֆների միջակայքային տոտալ ներկումների գույների քանակի նվազագույն և առավելագույն արժեքների համար։

Խոնդկարյան Տ. Վ. Տիպիզացված և ոչ տիպիզացված լամքա-թերմերի մասին էջ. 45–52

Դիտարկվում են տիպիզացված λ -թերմեր, որոնք օգտագործում են ցանկացած կարգի փոփոխականները և ≤ 1 կարգի հաստատունները: Օգտագործված 1 կարգի հաստատունները ուժեղ հաշվարկելի ֆունկցիաներ են և նրանցից յուրաքանչյուրն ունի ոչ տիպիզացված λ -թերմ, որը λ -որոշում է իրեն: Ներկայացված են տիպիզացված թերմերից ոչ տիպիզացված թերմեր բարգմանության ալգորիթմ, համաձայն որի ցանկացած տիպիզացված t թերմին համապատասխանում է ոչ տիպիզացված t' թերմ: Ուստի մասիրվում է, թե որ դեպքում տիպիզացված $t_1 \rightarrow_{\beta} t_2$ թերմերին, կհամապատասխանեն ոչ տիպիզացված t_1' , t_2' թերմերը, այնպիսին, որ $t_1' \rightarrow_{\beta} t_2'$:

ՖԻԶԻԿԱ

Գլիգորյան Ա. Պ. Պատահական մոդուլացված իմպուլսների կոհերենտության ազդեցությունը սպեկտրային սեղման ընթացքում էջ. 53–56

Հետազոտվել է պատահական մոդուլացված օպտիկական ազդանշանների սպեկտրային սեղմումը: Դրանք իրականացվել են տարբեր կոհերենտության ժամանակ ունեցող նախնական իմպուլսների համար՝ աղմուկի աղիտիվ մոդելի կիրառմամբ: Արդյունքները ցույց են տալիս, որ սեղման չափն աճում է նախնական ազդանշանի կոհերենտության ժամանակի նվազմանը զուգընթաց:

Շահիմյան Հ. Ա. Տարօրինակ աստղերի զանգվածի դեֆեկտը էջ. 57–61

Աշխատանքում հետազոտվում է տարօրինակ աստղերի զանգվածի դեֆեկտը: Պարկի մոդելի շրջանակներում դիտարկվել է տարօրինակ քվարկային նյութ, որը կազմված է u -, d -, s -քվարկներից և էլեկտրոններից և ունի մինչինական մոդելի պարամետրերի որոշակի արժեքների համար կախված կենտրոնական խտությունից ստացվել են երկու անգամ արելի զանգվածը գերազանցող մաքսիմալ զանգվածներով տարօրինակ աստղերի երեք մոդելների ինտեգրալ պարամետրերը: Տարօրինակ աստղերի մոդելների տվյալների համար բերվել են ներքին էներգիայի E_{in} և կապի էներգիայի $\Delta_2 M$ կախվածություններն ամբողջ M զանգվածից: Ցույց է տրված, որ տարօրինակ քվարկային նյութից կազմված տարօրինակ աստղերի փաթեթավորման գործակիցն էականորեն ավելի մեծ է, քան նեյտրոնային աստղերի համանման մեծությունը:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մականին Գ. Ս., Մաղսասյան Ա. Ը. Քառակուսային հավասարումների ընդհանուր լուծումը ազատ խմբերում էջ. 62–65

Ներկայացված է քառակուսային հավասարման ընդհանուր լուծումը, որը տրված է կողմնարոշված գրաֆի միջոցով կառուցված ավտոմատով: